

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱԳԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունված է 2018 թվականի մարտի 23-ին

Հոդված 10. Կառավարության նիստերը

1. Կառավարությունն իր գործունեությունն իրականացնում է կոլեգիալ, նիստերի միջոցով:
2. Կառավարության նիստերը հրավիրում և վարում է վարչապետը:
3. Կառավարության նիստերը, որպես կանոն, հրավիրվում են շաբաթը մեկ անգամ:
4. Կառավարության նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում է Կառավարության անդամների կեսից ավելին, բացառությամբ այն նիստի, որի ժամանակ քննարկվում է ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու հարցը, որն իրավագոր է անկախ քվորումից:
5. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակահատվածում նիստը համարվում է իրավագոր, եթե նիստին մասնակցում է Կառավարության անդամների առնվազն մեկ քառորդը:
6. Կառավարության անդամները պարտավոր են մասնակցել Կառավարության նիստերին: Նրանք Կառավարության նիստերից կարող են բացակայել վարչապետի համաձայնությամբ:
7. Կառավարության նիստերին ներկա լինելու իրավունք ունեն Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, վարչապետի աշխատակազմի ղեկավարը, պետական եկամուտների, քաղաքաշինության, միջուկային անվտանգության կարգավորման, վիճակագրական, անշարժ գույքի կադաստրի կոմիտեների և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարները, վարչապետի մամուլի քարտուղարը, [Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը](#), ինչպես նաև վարչապետի հրավիրած այլ անձինք:
8. Կառավարության նիստի օրակարգում ընդգրկված գաղտնի հարցերի քննարկմանը ներկա լինելու իրավունք ունեն Կառավարության անդամները: Գաղտնի հարցի քննարկմանն այլ պաշտոնատար անձինք կարող են ներկա լինել վարչապետի որոշմամբ:
9. Կառավարության նիստերում քննարկման են ներկայացվում, մասնավորապես՝
 - 1) օրենքների նախագծեր.
 - 2) Կառավարության ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծեր.
 - 3) Սահմանադրությամբ կամ օրենքներով նախատեսված այլ հարցեր:
10. Կառավարության նիստի օրակարգը վարչապետի ներկայացմամբ հաստատում է Կառավարությունը: Մինչև օրակարգի հաստատումը Կառավարության անդամները կարող են առաջարկություններ ներկայացնել դրա վերաբերյալ:
11. Կառավարության նիստի օրակարգում ներառվելիք հարցերը, որպես կանոն, նախապես քննարկվում են նախարարական կոմիտեներում, որոնց կազմը, կառուցվածքը, գործունեության շրջանակն ու կարգը սահմանվում են Կառավարության աշխատակարգով:
12. Եթե վարչապետը գտնում է, որ Կառավարության նիստի օրակարգ ընդգրկելու համար առաջարկվող որևէ հարցի քննարկման անհրաժեշտություն չկա, ապա օրակարգի նախագիծը Կառավարության անդամներին ուղարկելիս նշվում է այդ մասին: Տվյալ հարցը Կառավարության նիստում քվեարկվում է առանց քննարկման և զեկուցման, եթե Կառավարության անդամներից որևէ մեկը Կառավարության նիստում դրան չի առարկում: Առարկելու դեպքում հարցը քննարկվում է ընդհանուր կարգով:
13. Կառավարության նիստի օրակարգի քննարկման ենթակա հարցերը զեկուցում են Կառավարության անդամները, իսկ վարչապետի թույլտվությամբ՝ փոխնախարարները, Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարները:
14. Կառավարության նիստն ընթանում է մինչև օրակարգի սպառումը:

15. Կառավարության նիստերը դռնփակ են: Վարչապետի որոշմամբ նիստի մի մասը կարող է անցկացվել դռնբաց:

16. Կառավարության նիստերն արձանագրում է վարչապետի աշխատակազմը: Կառավարության նիստի արձանագրությունը կամ դրա մի մասը վարչապետի հանձնարարությամբ կարող է հրապարակվել:

17. Կառավարության նիստի օրակարգի նախագիծը, ներառյալ՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ փաստաթղթերը (բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող փաստաթղթերի) ենթակա են հրապարակման Կառավարության նիստից առնվազն մեկ օր առաջ, ընդ որում, օրակարգում ներառված օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող հարցերի վերնագրերի փոխարեն նշվում է «գաղտնի» բառը:

18. Կառավարության անդամը, ինչպես նաև Կառավարության նիստին ներկա այլ անձն իրավունք չունի առանց վարչապետի թույլտվության տեղեկատվություն հրապարակելու Կառավարությունում քննարկված որևէ հարցի քննարկման ընթացքի մասին:

Հավելված
«Կառավարության կառուցվածքի և
գործունեության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԸ

3. Արդարադատության նախարարությունը մշակում և իրականացնում է արդարադատության, այդ թվում՝ հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, սնանկության, փաստաբանության, հաշտարարության, նոտարական գործունեության, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման, անհատ ձեռնարկատերերի հաշվառման, զանգվածային լրատվության միջոցների հաշվառման, անձնական տվյալների պաշտպանության, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման, իրավական փորձաքննության, միջազգային իրավական փոխօգնության, հակակոռուպցիոն և պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործունեության ոլորտներում Կառավարության քաղաքականությունը, ~~ապահովում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարաններում Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանությունը:~~